



Մենդի անվտանգության կանոնակարգերի և օրենսդրության գիտության համաձայնեցումը՝ բոլոր սպառողների համար անվտանգ և որակյալ սննդի համաշխարհային հասանելիության ապահովման նպատակով

Ներդաշնակեցում: բնակչության սնուցում, նորարարությունների խթանում

Տարբեր երկրներում սննդամթերքի անվտանգության կանոնակարգերում եղած տարբերությունները խոչընդոտ են հանդիսանում երկրների միջև առևտրի կազմակերպման համար, ինչը անուղղակիորեն հանգեցնում է կատարելապես առողջ սննդի վերացմանը, մինչդեռ աշխարհում մեկ միլիարդ մարդ տառապում է քաղցից:

Բացի այդ իրար հակասող օրենքները խոչընդոտում են նոր տեխնոլոգիաներում նորամուծություններին և ներդրումներին սննդամթերքի մատակարարման ամբողջ շղթայով: Տեխնոլոգիաներ, որոնք բարձրացնում են արտադրման արդյունավետությունը, իջեցնում են սննդամթերքի վտանգների ռիսկերը, ավելացնում են համաշխարհային շուկայում սննդամթերքի տարածման հնարավորությունները: Միջպետական սահմաններում սննդի առգրավման, արգելման կամ ոչ պիտանի ճանաչման, ինչպես նաև ոչնչացման մասին որոշումները կայացվում են այն փաստերի հիման վրա, որ տվյալ սնունդը մարդու առողջության համար վտանգ է ներկայացնում: Իհարկե միշտ գոյություն ունեն սննդամթերքների կեղծման պոտենցիալ ռիսկեր տեղափոխման, առաքման և պահպանման ժամանակ: Անշուշտ կեղծված սննդամթերքի տարածումը պետք է կանխվի:


Բայց փաստը մնում է փաստ, որ ամեն տարի սննդամթերքի մի զգալի մաս ոչնչացվում է սննդի անվտանգության կանոնակարգերում եղած տարբերությունների պատճառով, ինչը գիտականորեն հնարավոր չէ հիմնավորել: Սննդամթերքի բնագավառի մի շարք գիտնականներ այս փաստն անընդունելի են համարում, որ աշխարհում մեկ միլիարդ մարդ մնում է քաղցաց, մինչդեռ անվտանգ և սննդարար մթերքը ոչնչացվում է:

Արդյունքում 2007 թվականին պաշտոնապես հիմնվեց [Գլոբալ Ներդաշնակեցման Նախաձեռնություն \(ԳՆՆ\)](#), GHI միջազգային, շահույթ չհետապնդող ցանցը՝ բաղկացած գիտական կազմակերպություններից և անհատ գիտնականներից, ովքեր աշխատում են միասին սննդամթերքի անվտանգության բնագավառում համաշխարհային օրենքների և կանոնադրությունների ներդաշնակեցման համար:


Ի՞նչն է պատճառը, կապի բացակայությունը

Գիտական տվյալների պակաս չկան: Մենդի անվտանգության մասին կան հազարավոր, փորձագետների կողմից ընդունված գիտական հոդվածներ և օրբստօրե տեղեկատվությունը էլ ավելի է աճում: Խնդիրը, որը պետք է լուծել հետևյալն է. հարկավոր է ուսումնասիրել տեղեկատվության լիովին օգտագործումը և հետքերով կողմերին տրամադրումը: Տոքսիկոլոգիայի գաղափարը կամ տոքսիկոլոգիայի սահմանումը այդպիսի ոչ աղեկվատ վարքի օրինակ է: Վաղուց հայտնի է, որ չափաբաժինն է ստեղծում թույլը, այսինքն տվյալ նյութը կարող է վնաս հասցնել, եթե մարդու օրգանիզմում հայտնվի բավական մեծ քանակությամբ: Այս մտքի հեղինակը Պարացելը թունաբանության նախահայրը, այն հիմնավորել է 16-րդ դարում հայտնաբերված կլինիկական ապացույցներով: Վերջերս շատ հայտնի գիտնականներ, որոնց թվում են Բրյուս Էյմսը և Էդվարդ Գալաբրեզեն, հիմնավորել և ներկայացրել են այն ուսումնասիրությունները, որոնք ապացուցել են թունաբանության այդ հիմնական սկզբունքը: Բայց գիտական միջավայրից դուրս այդ միտքը քիչ ըմբռնելի է և վատ տարածված, ինչի մասին վկայում է սննդի անվտանգության ոլորտում հակասական կանոնակարգերի առկայությունը, որոնք հանգեցնում են մթերքների անհիմն ոչնչացմանը: Արդյունքում ստեղծվում է թյուր կարծիք այն մասին, թե ինչից է բաղկացած անվտանգ սնունդը: Պարզ գրաֆիկները կօգնեն հասկանալ այդ սխալ պատկերացումները:

Գծապատկեր Ա




Գծապատկեր Բ




A գրաֆիկը ցույց է տալիս տոքսիկոլոգիայի մեկնաբանումը ըստ հասարակության և այլ ազդեցիկ քաղաքական գործիչների պատկերացումների: Ըստ նրանց վտանգը սպառնում է անկախ չափաբաժնից: Եվ այդ վտանգը կարելի է կանխել միայն, եթե վտանգ ներկայացնող նյութը լիովին դուրս բերվի կամ բացակայի օրգանիզմում:

Գծապատկեր Գ



Գծապատկեր Դ



Ե գրաֆիկում պատկերված է տոքսիկության մեկնաբանումը, ըստ այն քաղաքական գործիչների, ովքեր ազդում են կանոնակարգերի ստեղծման վրա: Որքան մեծ է չափաբաժինը, այնքան տվյալ նյութը վնասակար է օրգանիզմի համար: Հետևաբար ցածր կոնցենտրացիայով նյութերը, որոնք չունեն արտահայտված նշաններ, ընդունելի են, քանզի շատ քիչ մարդիկ կզգան իրենց վրա վնասակար ազդեցությունը:

Ը գրաֆիկը ցույց է տալիս ապացույցների վրա հիմնված թունաբանների կարծիքը: Շատ նյութերի համար իրավիճակը այնպիսին է ինչպես Պարացելը բացահայտել է. Եթե չափաբաժինը չափազանց մեծ է, ապա վնասը հասցվում է, բայց գոյություն ունի նաև ստորին սահման, որից ցածր ազդեցություն չկա: Այլ կերպ ասած որոշակի չափաբաժնից ցածր ոչ մի վնաս չի լինի:

Օրինակ՝ մարդու օրգանիզմում այնպիսի օրգաններ, ինչպիսիք են լյարդը և երիկամները թունազրկում են վտանգավոր նյութերը, նախքան դրանք կհասնեն ոչ բարենպաստ ազդեցություն թողնել առողջության վրա: Որոշ նյութերի համար չափազանց ցածր կոնցենտրացիաները նույնպես կարող են վտանգ ներկայացնել առողջությանը, ինչպես վիտամինների և հանքային նյութերի դեպքում է: Հիմնական սննդանյութերից, ինչպիսիք են վիտամին A-ն և երկաթը, որևէ մեկի անբավարարությունը կամ գերքանակները, օրգանիզմում առաջացնում են հիվանդություններ և նույնիսկ կարող են լինել մահացու (**գրաֆիկ D**):

ԳՆՆ-ի (GHI) Կապերի ստեղծում, Փոխզիջման կառուցում

ԳՆՆ-ի առաջնային խնդիրներից է սննդի անվտանգությանը վերաբերող հիմնավորված սկզբունքների հավաքագրումը և փոխանցումը ազդեցիկ մարդկանց, քաղաքական գործիչներին և կառավարման մարմիններին: Նպատակն է կատարելագործել վերջիններիս ըմբռնումը, և լավացնել բոլոր հետաքրքրված կողմերին տեղեկության փոխանցումը, որպեսզի սննդի անվտանգության բնագավառում օրենքների մշակման և ներդաշնակեցման հիմքում լինեն օբյեկտիվ գիտական սահմանումներ, այլ ոչ թե քաղաքական գործիչների կամ ՋԼՄ-ների կարծիքը:

ԳՆՆ-ը ուղղված է օժանդակելու փոխզիջման ստեղծման համար անցկացվող հանդիպումների կազմակերպմանը գիտական միջավայրում, գիտական տեղեկությունների ստեղծմանը, որոնք կարճ են, հստակ, հասկանալի և կարող են թարգմանվել տեղական լեզուներով: Ակտիվ կամավորների օգնությամբ ԳՆՆ-ը աշխատում է ուսումնական նյութերի, ռեսուրսների վրա, որոնք հասանելի են ողջ աշխարհով: Բացի այդ ԳՆՆ-ի շատ անդամներ հողվածներ և հարցազրույցներ են զեւտեղում տեղական հայտնի ամսագրերում ու ժողովածուներում: ԳՆՆ-ի անդամները ծառայում են որպես կազմակերպության պաշտոնական ներկայացուցիչներ տարբեր երկրներում, տարածում, փոխանակում են ԳՆՆ-ի և ներդաշնակեցման մասին եղած տեղեկատվությունը տեղական մակարդակով:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար [Գլոբալ Ներդաշնակեցման Նախաձեռնություն](#), GHI և նրա ուղղված ջանքերը բնակչության սնուցման, նորարարությունների խթանման համար, գիտության վրա հիմնված գլոբալ սննդի անվտանգության կանոնակարգերի ներդաշնակեցման միջոցով www.globalharmonization.net կայքում:



Անգլերենից թարգմանված Կարինե Գրիգորյանի կողմից